# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՔ-ԲԸԱՀԾՁԲ-17/32»

ք. Երևան «31» հունվարի 2017թ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 01.12.2016 թվականի «Գնման պայմանագրեր կնքելու թույլտվություն տալու մասին» N 1214-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջներով՝ Երևանի համայնքը, ի դեմս Երևանի քաղաքապետ Տ. Մարգարյանի (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռքբերման ժամկետը սահմանվում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը: Ընդ որում յուրաքանչյուր տարի, բացառությամբ 2017 թվականի, Ծառայությունը մատուցվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով

2.2.3 Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշմամբ սահմանված հատուկ տարածքների (այսուհետ՝ հատուկ տարածք (տարածքներ)) սահմանված կարգով տրամադրումը Կատարողին:

2.2.4 Հնարավորինս աջակցել Կատարողին՝ վերջինիս կողմից մատուցվող Ծառայությունը (ստանձնած պարտավորությունները) պատշաճ կատարելու նպատակով, այդ թվում՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ընթացք տալ Կատարողի կողմից ներկայացված Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված փաստաթղթերին (ապացույցներին) և արձանագրություն կազմելու էլեկտրային տվյալներին:

2.3 ԿԱՏԱՐՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել ապահովելու սույն պայմանագրի 2.2.3 կետով նախատեսված հատուկ տարածքների տրամադրումը:

2.3.3 Պատվիրատուի համաձայնությամբ սահմանված ձևով պարբերաբար դիտումներ կատարել ավտոկայանատեղի վճարի վճարման համար նախատեսված Պատվիրատուի գանձապետական հաշիվները:

2.4 ԿԱՏԱՐՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Իր ուժերով, միջոցներով և նյութերով՝ սահմանված պահանջներին համապատասխան, ապահովել հատուկ տարածքների կահավորումը՝ սույն պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացնելու նպատակով: Հատուկ տարածքի շահագործումը և սպասարկումը Կատարողի կողմից իրականացվում է միայն սույն պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման նպատակով:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև յուրաքանչյուր ամիս մատուցված ծառայության համար հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Իր կողմից հաստատված Ծառայության մատուցման հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված 3) և Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1) Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 3-րդ աշխատանքային օրը, բացառությամբ դեկտեմբեր ամսին մատուցած ծառայության հանձնման-ընդունման արձանագրության, որը Պատվիրատուին ներկայացվում է դեկտեմբերի 28-ին:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցներով,

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը, մինչև պայմանագրի ժամկետը (2026 թվականի դեկտեմբերի 31-ը), լրանալը կազմում է 3600000000.0 (երեք միլիարդ վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ, որը հաշվարկված է յուրաքանչյուր տարվա համար 360000000.0 (երեք հարյուր վաթսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն հաշվարկով: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է Պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր, բացառությամբ 2017 թվականի, որը հաշվարկվում է սույն պայմանագրի հիման վրա 2017 թվականին մատուցվելիք ծառայության գումարի նկատմամբ:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային

5.8 Կատարողը քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով գույքային պատասխանատվություն է կրում հատուկ տարածք տեղափոխված ավտոտրանսպորտային միջոցների վնասվածքի և կորստի համար:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի պահանջները տարածվում են կողմերի միջև 2017թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

7.4 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.5 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 5 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ |
| ք. Երևան, Արգիշտիի 1 | ք. Երևան, Ազատության 27 |
| Կենտրոնական գանձապետարան | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900012005048 | Հ/Հ 1150014964190100 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 00117375 |
| Տ. Մարգարյան ---------- | Վ. Հարությունյան ---------- |
| ստորագրություն | ստորագրություն |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված 1*

*«___» _____ 20 թ. կնքված N_____*

*ծածկագրով գնման պայմանագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Բնութագիրը |
|---|
| 1. **Երևանի ավագանու կողմից սահմանված համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում կազմակերպվող վճարովի ավտոկայանատեղերի պարտադիր կահավորում**<br><br>ՀՀ կառավարության 10.10.2012 թվականի N 1293-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի համաձայն ավտոկայանատեղերը պետք է ունենան հետևյալ կահավորումը, որը սահմանված է.<br>1) տարածքի մակերեսի կոշտ պատվածք, ավտոկայանատեղի սահմանների սահմանազատում փողոցի երթևեկելի մասում, տուրքի գանձման, տարածքի վերահսկման և երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների առկայություն, կառուցվածքային տարրերով տարանջատում.<br>2) ՀՀ կառավարության 10.10.2012 թվականի N 1281-Ն որոշման համապատասխան ձևի գետնանշում.<br>3) ավտոկայանատեղի տարածք ավտոտրանսպորտային միջոցների մուտք գործելու, տարածքից դուրս գալու մատչելի և անվտանգ ուղիներ.<br>4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի N 955-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան՝ «Կայանման տեղ» և «Տրանսպորտային միջոցների կանգնեցման ձևը կայանման տեղերում», իսկ վճարովի ավտոկայանատեղերի համար՝ նաև «Վճարովի ծառայություններ» ճանապարհային նշաններ.<br>5) վճարովի ավտոկայանատեղի համար տեղեկատվական ցուցանակ, որը պետք է պարունակի ավտոկայանատեղի կազմակերպչի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, հեռախոսահամարը, ավտոկայանատեղի աշխատանքային ռեժիմը, ավտոկայանման ծառայության մատուցման դիմաց սահմանված վճարի չափերը:<br>Կատարողը պարտավոր է պայմանագրային պարտավորությունների կատարման ողջ ընթացքում իրականացնել Պատվիրատուի կողմից տրամադրված ավտոկայանատեղերի գույքի պահպանումը, վերանորոգումը (անհրաժեշտության դեպքում նաև փոխարինումը) և տեսանելի գետնանշման առկայության ապահովումը:<br>5) Վճարովի ավտոկայանատեղերում նախատեսել առանձին հատվածներ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամի կարգավիճակ ունեցող երեխա տեղափոխող ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար:Նշված ավտոտրանսպորտային միջոցների համար փողոցների յուրաքանչյուր ուղղության վրա և հրապարակներում, որտեղ կազմակերպվում է վճարովի ավտոկայանատեղեր, նախատեսել 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամի կարգավիճակ ունեցող երեխա տեղափոխող առնվազն 1 /մեկ/ ավտոտրանսպորտային միջոցի կայանման համար հատված:<br>6) Ավտոկայանատեղերին անմիջապես հարակից տարածքում ապահովել վճարումների ընդունման տերմինալների տեղադրումը, ընդ որում՝ յուրաքանչյուր ավտոկայանատեղի համար վճարումների տերմինալի տեղը սահմանում է Երևանի քաղաքապետը՝ կատարողի առաջարկությամբ:<br>Պատվիրատուի մոտ նոր ավտոկայանատեղեր ստեղծելու կարիք առաջանալու դեպքում Կատարողը Պատվիրատուի հետ համաձայնեցված պատվեր-առաջադրանքի հիման վրա կահավորում է նոր ավտոկայանատեղ(եր)ը ըստ սահմանված ժամանակացույցի: |
| 2. **Երևանի ավագանու կողմից սահմանված համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում կազմակերպվող վճարովի ավտոկայանատեղերի էլեկտրոնային համակարգերով հսկողություն**<br>1) Ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ավտոկայանատեղի տարածքում տեղադրված առցանց համակարգով աշխատող էլեկտրոնային նկարահանման սարքերով, որոնց միջոցով շուրջօրյա հսկողություն է իրականացվելու կայանատեղի ողջ տարածքում: |
| 3. **Ավտոկայանատեղի տուրքի վճարման նկատմամբ հսկողության իրականացում**<br>Ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է անմիջական և/կամ էլեկտրոնային համակարգերի միջոցով:<br>1) Անմիջական հսկողությունն իրականացվում է ավտոկայանատեղի կազմակերպչի նշանակած կամ լիազորած անձի (կարգավարի) միջոցով,<br>2) էլեկտրոնային համակարգերով հսկողությունը իրականացվում է շրջիկ կարգավարների կամ այլ հասանելիության միջոցով. էլեկտրոնային համակարգերը պետք է ապահովված լինեն GPS կամ GLONASS |

**4. Կարգավարի և շրջիկ կարգավարի գործառույթների իրականացում**

1) Վճարովի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի կայանման համար վճարի վճարված լինելու փաստի ստուգում,

2) վճարի վճարման բացակայության կամ տվյալ ժամանակահատվածի համար վճարը վճարված չլինելու դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված փաստաթղթերը (ապացույցները) և արձանագրություն կազմելու ելակետային տվյալները ներկայացնում է Երևանի քաղաքապետի կողմից լիազորված անձին,

3) «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով նախատեսված ժամկետից ավելի ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցն առանց համապատասխան վճարի վճարման կայանելու դեպքում ավտոտրանսպորտային միջոցը հատուկ տարածք տեղափոխելու վերաբերյալ ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1282-Ն որոշմամբ սահմանված արձանագրության կազմում (եթե տրանսպորտային միջոցի սեփականատերը կամ լիազորված անձը կամ այն անձը, որին ամրակցված է տվյալ միջոցը չի ստանձնում պարտավորություն վճարելու տեղական վճարն ու վճարը չվճարելու համար օրենքով նախատեսված տուգանքը):

Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը վճարովի ավտոկայանատեղում կայանելու համար սահմանված վճարը չվճարելու տուգանքի վերաբերյալ կազմվող արձանագրության համար անհրաժեշտ ելակետային տվյալներն են, որը տրամադրվում է կարգավարի և շրջիկ կարգավարի կողմից.

1) ավտոտրանսպորտային միջոցի մակնիշն ու հաշվառման համարանիշը,

2) առանց տուրքի վճարման կայանման փաստի հայտնաբերման ժամանակը,

3) տվյալ ավտոկայանատեղի հասցեն,

4) առանց վճարի վճարման կայանված տրանսպորտային միջոցի լուսանկարները և տեսաձայնագրությունը:

**Հատուկ տարածք տեղափոխելու ծառայություններ և հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար տուրքի գանձման ապահովում**

1) «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ավտոտրանսպորտային միջոցը առանց համապատասխան վճարի վճարման ավտոկայանատեղում 48 ժամից ավել կայանման փաստի վերաբերյալ արձանագրություն կազմելու դեպքում, պետք է իր միջոցների հաշվին ձեռնարկի համապատասխան միջոցառումներ ավտոտրանսպորտային միջոցը ՀՀ կառավարության 10.10.2012 թվականի N 1293-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով սահմանված հատուկ տարածք տեղափոխելու համար:

2) Կազմակերպությունը պետք է ապահովված լինի ավտոտրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու համար նախատեսված համապատասխան մեքենա–մեխանիզմներով և օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն կրի ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդը անվնաս տեղափոխելու և պահպանման համար:

3) Կազմակերպությունը պետք է իրականացնի հատուկ տարածք տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի հաշվառումը՝ Երևանի ավագանու 25.12.2012 թվականի N 562-Ն որոշմամբ սահմանված կարգով:

4) Կազմակերպությունը իրականացնում է հատուկ տարածքում ավտոտրանսպորտային միջոցի կամ դրա կցորդի պահպանման համար վճարի գանձման ապահովումը:

| Ծառայության մատուցման ժամկետը | |
|---|---|
| Սկիզբը | Ավարտը |
| Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից | Մինչև 31.12.2026 թվական |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012005048
ՀՎՀՀ 02593108

Տ. Մայոգարյան ----------

**ԿԱՏԱՐՈՂ**
«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 27
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150014964190100
ՀՎՀՀ 00117375

Վ. Հառությունյան----------

*Հավելված 2*
*«___» _____ 20 թ. կնքված*
*N_____ ծածկագրով գնման պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1. | Երևան քաղաքում ավտոկայան ատեղերի կազմակերպման ծառայություններ | 30000000.0 | 60000000.0 | 90000000.0 | 120000000.0 | 150000000.0 | 180000000.0 | 210000000.0 | 240000000.0 | 270000000.0 | 300000000.0 | 330000000.0 | 360000000.0 | 360000000.0 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով։*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900012005048
ՀՎՀՀ 02593108

Տ. Մարգարյան----------
ստորագրություն
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 27
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150014964190100
ՀՎՀՀ 00117375

Վ. Հարությունյան----------
ստորագրություն
Կ.Տ

*Հավելված 3*

*«___» _____20 թ. կնքված N_____*
*ծածկագրով գնման պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| _____ | _____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«___» _____20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

*Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.*

*Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 3.1
«___» _____ 20 թ. կնքված
N _____ *ծածկագրով գնման պայմանագրի*

# ԱԿՏ N

## պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կատարողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| Անվանումը | Քանակական ցուցանիշը (փաստացի) | Չափի միավորը |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն